

<<Անտառային հրդեհների կանխարգելում, հրդեհաշիջում և հետևանքների վերացման կազմակերպում>> թեմայով խորհրդակցություն Սյունիքի մարզպետարանում

Օգոստոսի 28-ին Սյունիքի մարզպետարանում անցկացվեց խորհրդակցություն՝ «Անտառային հրդեհների կանխարգելում, հրդեհաշիջում և հետևանքների վերացման կազմակերպում» թեմայով: Խորհրդակցությունը վարում էր մարզպետի տեղակալ Ա. Մարոյանը: Թեմայի վերաբերյալ քննարկումը սկսեցին <<Հայանտառ ՊՈԱԿ>>-ի անտառների պահպանության և պաշտպանության բաժնի պետ Ա. Մանասերյանը և <<Հայանտառ ՊՈԱԿ>>-ի տնօրենի խորհրդական Վ. Ավետյանը:

Ներկա էին Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգայանը, բնապահպանության բաժնի պետ Ա. Հարությունյանը, ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության պետ Ա. Հարությունյանը, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ինչպես նաև Կապանի, Քաջարանի, Ագարակի Անտառաշատի, Առաջածորի, Արծվանիկի, Եղեգի, Եղվարդի, Նորաշենիկի, Սևքարի, Վարդավանքի և Վերին Խոտանանի համայնքների ղեկավարները կամ նրանց ներկայացուցիչները: Խորհրդակցության մասնակիցները հանդես եկան դիտողություններով ու կառուցողական առաջարկներով, կարևորվեց առավել արդյունավետ համագործակցությունն ու տեղեկացվածությունը բնակչության շրջանում: